

**III.«2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՄԻ ՔԱՆԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ**

1. Վիճակագրությանը վերաբերող հրավական դաշտի բարելավում

1.1.«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան.

2012թ. ընթացքում շարունակվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներ: Մասնավորապես՝ կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների՝ ՏԳ-ՏՀԴ-ով սահմանված գործունեության տեսակներին համապատասխանեցման, և ըստ այդմ, դասակարգչի սկզբունքների ու մոտեցումների կիրառման միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով հաստատվող՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և/կամ դրանց կողմից իրականացվող գործունեության տեսակներին առնչվող նախագծերում նշված (թվարկված) գործունեության տեսակները ՀՀ ԱՎԾ առաջարկությամբ խմբավորվել են ըստ ՏԳ-ՏՀԴ-ի:

Վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման և ամբողջացմամբ պայմանավորված, փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ ՎՊԽ 2002թ. հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ:

2. Տարածքային (ռեգիոնալ) վիճակագրության զարգացում

Շարունակվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային (ռեգիոնալ) վիճակագրության արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, վերոհիշյալ ստորաբաժանումների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ:

Շարունակվում են ՀՀ մարզերի կտրվածքով վիճակագրական ցուցանիշների բազայի ձևավորման աշխատանքները:

ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի «Տարածքային վիճակագրություն» բաժնի «Հայաստան» ենթաբաժնում քարտեզային և աղյուսակային պատկերմամբ գետեղվել է ՀՀ մարզերի և ք. Երևանի 2006-2011թթ. վերաբերյալ եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական ամփոփ տեղեկատվությունը, իսկ «Հրապարակումներ» ենթաբաժնում՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2012» երկլեզու (հայերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուն, «Ատլաս. Հայաստանի Հանրապետությունը մարզերով և Երևան քաղաքով, 2012» երկլեզու (հայերեն և անգլերեն) վիճակագրական էլեկտրոնային հրապարակումը, ինչպես նաև 11 էլեկտրոնային հրապարակումներ՝ ՀՀ յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի վերաբերյալ, որոնցում ներառված ցուցանիշների շրջանակը, նախորդ հրապարակումների համեմատ էականորեն ընդլայնվել է:

**3. Մեթոդաբանական կարողությունների զարգացում,
Նորմատիվ որոշումների գրանցում ՀՀ արդարադատության նախարարությունում**

2012թ. ընթացքում շարունակվել է ՀՀ ՎՊԽ նորմատիվ որոշումների, որպես գերատեսչական նորմատիվ ակտ՝ ՀՀ արդարադատության նախարարությունում պետական գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 32 նորմատիվ իրավական ակտեր, որոնցից՝ 29 վիճակագրական դիտարկման փաստաթղթեր ու դրանց լրացման հրահանգներ կամ դրանց փոփոխություններ ու լրացումներ (տես՝ հավելված 1):

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով, 2012թ. ընթացքում հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերը համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի և Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին: Բացի այդ, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածության նվազեցման նկատառումներով պայմանավորված, փոփոխվել են պետական վիճակագրական մի շարք հաշվետվությունների ներկայացման ժամկետները և պարբերականությունը:

4. Մեթատվյալներ

ԱՄՀ-ի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է ՏՏԸՀ (1997թ. դեկտեմբեր) և ՏՏՀՍ (1996թ. մարտ): Թվարկվածներից ՏՏԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին:

ՀՀ ԱՎԾ, ՀՀ ֆինանսների նախարարության ու ՀՀ ԿԲ մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՍ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), կատարելով կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՏՏՀՍ-ն պարունակում է մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Pages/SDDS/Home.aspx> : Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) ՏՏՀՍ տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/> : Մեթատվյալները գետեղված են նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» բաժնի «Մեթատվյալներ» ենթաբաժնում:

ՏՏՀՍ-ն ներառում է 21 խումբ ցուցանիշներ, որոնք ընդգրկված են իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներում: Այդ ցուցանիշների արդիականացումը իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ առնվազն տարեկան կտրվածքով: Տվյալների արդիականացման ժամկետները ներկայացված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող նախապես տարածման օրացույցի էջում՝ <http://docs.armstat.am/nsdp/arc/> :

2009թ. փետրվարի 10-ին ԱՄՀ պաշտոնական կայքէջում (<http://www.imf.org/external/NP/rosc/rosc.aspx>) գետեղվել է Հայաստանի վերաբերյալ ԱՄՀ Ստանդարտների և կոդերի պահպանման գեկույցը, որը ներառում է տվյալների որակի գնահատման ձևաչափի օգտագործմամբ մանրամասն գնահատումը: